

Խտալիոյ մայրաքաղաքի ըլլայ : Պ. Բեղլուի երեսփոխանն ալ առաջարկեց Սուրբ Պետրոսի դեմարտադրութեան լաւագոյն խափանել թողոր Խտալիոյ մէջ, իրրեւ տրեւելը Խտալիոյ միութեանն եւ ազատութեանն :

— Բարձրադաստիւ Ապի փաշայ, արտաքին գործոց պաշտօնեան, Գանուբեան Իշխանութեանց կախ մնացած գործերն կարգադրելու համար, Կոստանտնուպոլիս ըլլալիս խորհրդակցութիւնն սկսելու հրահրեց եւրոպական տէրութեանց դեսպաններն, ուր հրահրուեց յաւանաւ Կուզա Իշխանն կարեւոր բացատրութիւններ տալու համար : Օսմանեան կառավարութիւնն Տունիս պատահած ապստամբութեան լուրն առնելով՝ Հայդար Իշխանին հոն խրկեց, իրրեւ ծայրագոյն գործակալ, ուր խրկուեցան նաեւ 4 պատերազմական նաւեր զորքով լեցուն : որոց ամենեցուն Տէրութիւնն պատուիրեց մեծ չըմանկատութեամբ վարուել : Օսմանեան Տէրութիւնն 20 միլիոն ֆ. նոր փոխառութիւն ըրաւ Փարիս, եւ 12½ միլիոնի ալ Պոլսի հարկերն 12 շահով :

— Փորձուգալի մէջ հարկ հաւարելու պատճառաւ թեթեւ խտովութիւն պատահեցաւ. Ֆիլիսթիի բնակիչներն իրենց հասարակութեան ղեկանաւորներն այրեցին : Մի և նոյն երկրի լոյսերի համալսարանի ուսանողներն ալ խտովութիւն հանեցին : Նոյն երկրի օրինաց համեմատ, ամեն անգամ, երբ աղբայական գերդաստանին մէջ օրդեծնութիւն պատահէր՝ ուսանողայ յանցանքն կներուէին : Այս անգամ, տէրութեան գործակալներն այս արտօնութիւն զանց ընելով՝ Համալսարանի աշակերտներն ալ ապստամբեցան. և երբ զօրաց հրաման տրուեցաւ անոնց դէմ՝ կրակ ընել, ամենն ալ, իրենց մեծաւորի հրամանին ախանջ չկախելով իրենց զօրանոցն դարձան :

— Հարեչէն հասած լուրերն շատ դժբաղդեցիչ էին : Մեր կրօնակից Նիւթիլայցիներն ընտանի պատերազմի մէջ խրուած, և երկիրն երեք հարկատու իշխանաց և մի միապետ կայսեր մէջ բաժնուած՝ և, շատ հաւանականաբար, Յիսուսեանց փութեան արծարծեալ՝ այժմ իրարու գաւառ կապականեն և իրարու ժողովուրդ կըրեն : Թէոգորոս կայսրն ալ, վերջին լուրերուն նայելով, պաշարուած է այժմ ապստամբներէն :

— Պրուսիոյ Մոնիստորն զինադադարի վերայ այսպէս կխօսի : « Մայիսի 12էն սկսեալ, մէկ ամիս, զինադադար պիտի ըլլայ ծովու և ցամաքի վերայ : Մի և նոյն օրն Գանձարդ ծովային պաշարումն պիտի վերցնէ : Պրուսիա և Ավստրիա կպարտաւորին, զինադադարի ատեն, Յուդանդի այն մասերուն մէջ, զորս գրաւերեն իրենց զօրքով, չխափանել ոչ վաճառականութիւնն, ոչ հաղորդակցութիւններն, ոչ վարչութեան կանոնաւոր ընթացքն և ոչ իսկ պատերազմի հարկ պիտի առնուն. այլ ընդհանրապէս պիտի վճարեն Գերմանացի զօրաց ամեն պիտոյից գինն, որք միայն չարունաւեն պիտի մնալ իրենց բռնած այժմեան մարտադիր տեղերն : Առտող կողմերն հաճեցան իրենց այժմեան պատերազմական կացաններն պահել ծովու և ցամաքի վերայ. և յանձն առին չզօրացնել զանոնք զինադադարի ատեն : Պաշտօնական լուր պիտի տրուի ստոր համար ծովային և ցամաքային պատերազմող զօրաց հրամանատարներուն, ամեն մէկուն, իր սեփական տէրութեան կողմէն : »

— Շեղջիկ-Հոլանդի զբառութիւններն և Յուդանդ անգամ ընդարձակ գրութեան լեցունեցան, որք Գերմանիոյ ամեն կողմէն, մանաւանդ, Պրուսիայէն, հոն կթափին, և որոց նպատակն է տեղացիներն համոզել Գանձարդէն զատուելու և Պրուսիոյ հետ կցուելու համար : Թէ և խորհրդակցութեան ամեն գործողութիւններն գաղտնի կպահուին. այսու ամենայնիւ կըսուի թէ Անգլիա, Ռուսիա և Ֆրանսա համաձայնեալ են զբառութիւններն բաժնել թողոր Շեղջիկ Գանձարդին ձգելով և թողոր Հոլանդի Գերմանիային հետ կցելով : Իսկ Պրուսիա և Ավստրիա, որք առաջ, 1852 թուի դաշինքն և հետեւաբար Գանձարդի ամրոցում թիւնն յարգել կխոստովանէին, այժմ երկուքն ալ կմերժեն :

— Փարիսի 14 Մայիսի երեկոյեան Մոնիստորն Պապի կոնգրէի հրատարակութիւնն արգիլեց Ֆրանսայի մէջ, որ Մարտի 17ին Հռոմէն խըրկուած, Լիոնի ժամակարգութեան տեղ Հռոմայ ժամակարգութիւնն կուգէր մտցունել : Ահաւասիկ պաշտօնական լրագրի բուն խօսքն : « Տէրութիւնն ի գործ դնելով այն իրաւունքն, զոր անոր կտան Կոնկրդայի (օրէնք 18 գերմինալի, տարի 10. յօդուած Ա.) հիմնական յօդուածներն, հրաման չտուաւ որ Ֆրանսայի մէջ հրատարակուի (այսինքն ի գործ դրուի) անցեալ Մարտի 17ին Հռոմայ ժամակարգութիւնն Լիոնի թէմին մէջ մտցունելու համար Հռոմ գրուած կոնգրէին : Հետեւաբար ով որ հրատարակէ այն կոնգրէին՝ կընաբարէ օրէնքն, զոր Տէրութիւնն պարտական է եւ կամի յարգել տալ : »

ՅՐԱՆՍԱ.

Հետեւեալ յայտարարութիւնն 1864. Ապրիլի 21ին Սեպեր հրատարակուեցաւ : « Մարաշախտ Փելիսիէ, դուքս Մալակովի, ընդհանրական կուսակալ, առ միահամու Արար և Կարիլ բնակիչս : »

« Օրանի գաւառի Հարաիլի խտովութիւններ ծագեցան, և Սի-Սօլիման, Օւլեդ Սիլի Դէյի (ցեղի) բաշ աղան, խտորելով այն ձամբայէն, որուն հետեւեցին պատուով Սի-Համզա, իր հայրն, և Սի-Բու-Բեքը, իր եղբայրն, յուղման գլուխ եղաւ : Տիրաբեալ չըմանակի հրամանատարն, որ հետեւակներու և գումերու մէկ ջոկով Այն-Բու-Բեքը դնացեր էր, ապստամբներէն յանկարծ պաշարուեցաւ : Գումերու մէկ մասն զնաթողուց. և այս գլխաւոր աստիճանաւորս իր քիչընոր մարդոց հետ սպանուեցաւ : » Սի-Սօլիման ալ, կոխն դեռ նոր սկսած, սպանուեցաւ. բայց իր փորրագոյն եղբայրն անոր յաջորդելով, անոր պէս, ժողովուրդն ապստամբեցուց : »

« Հարաիլի ցեղերէն շատերն անոր հրաւերն ընկալան, և ցեղապետերն, որք երկար ատենէ ի վեր, Ֆրանսայի դրօշակներուն տակ կբաշին, անոնց գլուխն անցան : Այժմ՝ զօրքն կբաշ. և վտարանջութիւնն դատուի պիտի : Ոչ որք մտքէն չանցնեն, որ Ֆրանսա մատնութիւնն չպատժէ, և իր իշխանութիւնն չյարատեւ հոն, ուր հաստատուէ և կլարէ զայն արդարութեամբ և բարեմբութեամբ : Բայց սակայն այս իրողութիւններս, այլոց մեկնութեանց նայելով, կրնան ժողովրդեան և գլխաւորաց միտքն վրդովել : Մարդիկ կան, որք անդադար կերպով թէ Սրար ժողովրդեան

վերջն եկեր է. և թէ մօտեցեր է այն վայրկեանն, ուր Բաշ-Աղաներ, Աղաներ, Կայիդներ, Դէյներ, Կապիներ և այլք բոլորովին պիտի անհետանան : Այս զրոյցներս անհիմն են. Ֆրանսայի Տէրութեան միտքն այնպէս չէ : Թող միամիտ կենան բնիկ ցեղապետներն, թող հանդարտին տոհմերն : »

« Մի թէ այժմ, որ անցեալ տարուան առատ հունձն եւ այս տարուանս աւելի առատագոյն հունձի յոյսն ամեն մարդոյ բարեկեցութիւն եւ յաջողութիւն պարգևելով, արժան է՝ անկարգութիւններ, վտարանջութիւններ և կոխներ նորէն սկսելով, յանձն առնուլ ամեն տեսակ թշուառութիւններ, որք անոնց հետեւանքն են : Եթէ ժողովուրդն անցեալն ժողովուրդ՝ ներկայի վերայ վստահութիւն չունի, թող կարգաւ Կայսեր 1863. Փետրվարի 6ին ինձ գրած նամակն : Անոնք տեսնելուն թէ կառավարութիւնն ինչ տեսակ բարի միտք ունի առ նոսա : Անոնք ստոյգ երաշխաւորութիւն կգտնեն ազապայի համար Ն.Վ. այս խօսքիս մէջ « ես եմ նոյնպէս կայսր Արարայ, որպէս Ֆրանսայի : » Ընդհանրական կուսակալ Աղբիայի, Մարաշախտ Փելիսիէ, Դուքս Մալակովի :

ԻՏԱԼԻԱ.

Արդագան Պապն մէկ Յիսուսեան սրբացնելու Կոնխտորիային մէջ հետեւեալ բողոքս ըրաւ Ռուսիոյ դէմ : « Հիւսիսի ամենամեծ կայսերութեան ըրած անգութ հաղածանքն տեսնելով, անհնարին է ինձ լուր. կամբաստանեմ մէկ ինքնաւալ, որ իր հպատակներն յապտամբութիւն մղեցն յետոյ, ապստամբութիւնն զսկսելու ստարուակաւ, կաթողիկոսութիւնն արմատախիլ կընէ, ամրոց ժողովուրդ ցրտաշունչ երկիրներ կտանի կամ որ դուրկ են կրօնական ամեն միտքարութեան, կարծողէ եպիսկոպոսներ, և, անյուր բան, զանոնք իրենց իրաւաստութեան կհանէ, զոր տուերէր անոնց Սուրբ Աթոռն : Ոչ որ չհամարձակի սակայն ըսել թէ, ես կարեւոր բողոքներ ընելով յեղափոխութիւն կըրգում : »

« Գիտեմ զանազանութիւն ընել արդի յեղափոխութեան և խոհակոս ազատութեան մէջ. եթէ կըողբեմ անոր դէմ՝ իմ խիղճս սիրտիւր համար կըողբեմ և որպէսզի մէկ օր չլեւմ Գերագոյն Գաւառարի ձայնն, որ ինձ ըսելու է, « ինչո՞ւ լուռ կեցար : »

ԹԻԲԻԲԻԱ.

Կոստանտնուպոլսէն Ապրիլի 16ին Էնդէյիանդանս Բերթիկ կգրեն :

« Այսօր Սուլթանն Մարմարայի ծովուն մէջ դրօնկու կերթայ նոր կայսերական Տալիս անուանալով, որ Լոնդոն շինուեցաւ եւ անցեալ չարաթ հոս հասաւ : Նորին Վեհափառութիւնն փորձել կուգէ այս շքեղ շողեկնաւ, որ իր զուարճութեան համար պատրաստուած է, և որ, պէտքի ատեն, կրնայ հեշտ պատերազմական նաւի փոխուիլ : Երկու այլ շողեկնաւ ընկերանան պիտի Տալիսային, որոցմէ մէկուն վերայ՝ երկն պիտի կայսերազուն իշխանքն, և միւսին վերայ՝ Նորին

լուն զանոնք անյապաղ Թիւրքիա փոխադրելու համար, որոշեցին որ Օղեսայէն և մինչև Կոստանտնուպօլսէն քանի չափ առաջատար և շոգեշարժ նաւեր բերել տան իրենց ծախքովն որպէսզի զանոնք նաւ զնեղով Օսմանեան Կայսերութեան նաւահանգիստներն խաւրեն: Կարծուի թէ 200,000 չափ Չէրքէզ նետուն պիտի այսպէս Փոքր Ասիայի ափերու վերայ: Այս խիստ տնօրէնութիւններս Թուրքաց սահմանակից գաւառներու վերայ խորին տալարութիւն ըրին, որք իրենց կրօնակցաց թշուառութեանցն անկարելից չեն կրնար մնալ: Նոր առնուած գաւառներուն մէջ զինուորական ճամբաներ բացուեցան, որք արագ հաղորդակցութիւն կհաստատեն ծովեղերէրէններէրն գաւառներու հաստատութեանց մէջ: Եւ Սև լեռներու և ծովեղերէրի մահմետական բնակչաց տարադրութիւնն Ուս զօրաց յամանեան կայսերութեան սահմաններու վերայ շարժելու կատարեալ ազատութիւն կտայ:»

ԱՆԳԼԻՍ

Զօրավար Գարիբալդին Ապրիլի 25ին Մեծին Բրիտանիոյ ծովեզրէն զատուելով հետեւեալ հրաժարական ողջոյնս ուղղեց առ խղատաւոր ազգն Անգլիոյ, զոր Տայմսէն թարգմանելով մեր ընթերցողաց կմատուցանեմք:

«Անգլիական Ազգին»

«Հոյակապ քաղաքներ, համբաւաւոր հոմարուէստներ, քաղաքացւոց ամեն միճակ ներկայացնող միաբանութիւններ անթիւ ուղեբճներով զիս սլատուեցին. որոց կրաղճայի յամենայն սրտէ արժանաւորապէս պատասխանել. այլ ժամանակ չունիմ. կյուսամ սակայն թէ կարող եմ, ըստ մասին, իմ պարտքս հատուցանել իմ երախտագիտութեան և սիրոյ յատուկ հրաժարական ողջունիւս, զոր ամենեցուն կուղղեմ:»

«Այս պատեհութեան մէջ, չկարեմ սակայն իմ անձին վերայ միայն խօսիլ. ըստ որում ինձ ուղղուած այն ձօխ և զուարթ բաներն չկարեմ համարիլ իբրեւ պարզ անձնական պատիւ, որ մեծ իրաւունքէն արտաքոյ, զոյգն կարեւորութիւն պիտի ունենար, և որոյ համար, յընթացս այս բանի մի աւուրց, Անգլիոյ ժողովրդեան սիրտն և իմ միաբան զարկին: Պարտիմ համարիլ զանոնք իբրեւ նոր ապացոյց այն համակրական խնամոցն, զոր աշխարհի ազգերէն ամենէն իմաստունն, ամենէն ծաղկեալն, ամենէն ազատն կխոստովանի առ մէկ ուրիշ ազգ, որ երկու անգամ մայր եղեր է քաղաքակրթութեան, որ դարերով մարտիրոսութեան և կռուոց (համբերելն յետոյ) արժանացաւ աշխարհի մէջ իր տեղն նորէն բռնել և գոչել. ողջնայի:»

«Ասոր համար կրնամ ուրեմն Իտալիոյ խորհուրդն Անգլիային յայտնել, ինչպէս կրնամ ընծայել Անգլիա իմ երկրի իբրեւ օրինակ եւ ակնկալութիւն: Երկու ազգերս արդէն քոյր են. անոնք կրնան ամենայն ասպնջութեամբ և վստահութեամբ իրարու հետ զրուցել: Անգլիոյ երկրի կարգադրութիւններն, օրինաց ակնածութիւնն և ինքնիշխան, այլ կարգաւորեալ զօրութեանց սքանչելի այն ամեն հիւսուածն, այն ճամբիւս եւ

օրինաւոր կարգն, առանց նուազութեան եւ առանց բռնաւորութեան, բացարձակ և անձնաւոր ազատութեան հետ զուգաւորեալ, ազատութիւնն խղճի, անբռնաբարութիւնն բնակարանի, ազատութիւնն տպարանի, խօսելու, ընկերութեան, իրաւունքն ազգային պաշտպանութեան, որ մէկ զատ միաբանութեան արտօնութիւն չէ, այլ որ ամենուն տրուած է, զինուորութիւնն փառաւոր. այլ ազատ արդի ժամանակի մահաւոր խոցէն, որ զինուորակալութիւն կըսուի, կամաւոր զինուորներն, որք Անգլիոյ փառքն են, զորս կերպով իմ աշխարհի համար, կարողութիւնն, արժանաւորութիւնն, յարատեւութիւնն, — մանաւանդ յաւատեւութիւնն, որ ձեռքէ չթողուր իր շահած վիճակն կամ սահմանադրութիւնն, — այս ամեն իրերս, որք կզարմացնեն քաղաքակիրթ ազգերն և սաստիկ նախանձաւորութիւն, կըսեմ, գրեթէ խիղճ կզրգոեն անոնց մէջ, կրնան և պարտին առաջարկուիլ: Իտալիոյ իբրեւ օրինակ: Իսկ ես, անհարկն էր ինձ, բանի մի օր անցունել այս երկրի մէջ, եւ ոչ մեծարել այս մեծամեծ ճամբարութիւններս, մանաւանդ չյիշեցնել զանոնք իմ հայրենակցացս, իբրեւ դաս և գրգռ աւելի քան թէ իբրեւ վկայութիւն այն մեծ տալարութեան, զոր ըրաւ Անգլիա իմ մտքի վերայ:»

«Ոչ ինչ ունիմ յիշեցնել Անգլիոյ ազգին, զոր արդէն չգիտէ: Նա գիտէ Իտալիոյ տենչն: Իտալիա որոշեթ ասորիւ. անիկա պարելու իրաւունք ունի: Եթէ ասոր համար կկատարեն՝ կյաւելցնեմ թէ անի կապրի արդէն իբրեւ. և ոչ ինչ արգելու պիտի անոր լրումն: Իտալիա մէկ փափագ միայն ունի, այսինքն է փչրել երկու թշնամի պետութեանց լուծն, որք զնա կենդին: Ասիկա կըսեմ յանդիման աշխարհի, որպէսզի իմանայ. անի (Իտալիա) չպիտի հանգչի մինչև որ իր իղձն չկատարուի, որ անոր համար կենաց և մահու խնդիր է: Անգլիոյ ազգն, որ աւելի Ուիլիամսի տակ խորատոյզ ըլլալ յանձն կառնու բան թէ ներել օտարին որ հայրենեաց սուրբ հողն լլկէ, կզգայ թէ ո՞րչափ օրինաւոր է և ո՞րքան անիտիտիս իմ երկրի որոշումն: Անգլիա գիտէ որ 1860ին անհաշարիւթեամբ գործակցելով Իտալիոյ ճաւատագրի լաւութեանն, անի ձեռնառու եղաւ Եւրոպայի խաղաղութիւնն և բարեկարգութիւնն ապահովելուն, — խաղաղութիւն և բարեկարգութիւն տեւական և բարերար, վստայի հիմնեալ են անոնք իրաւանց և զարգացման վերայ:»

«Անգլիա, վստահ եմ, ևս քան զէս հաստատուի պիտի այն իղէպին մէջ թէ եթէ Իտալիա, հարկ է, որ ծառայական դաշնակցութեանց նկատմամբ, անկախութեամբ և արխարար վարուի, որպէս զի իր իսկական բարեկամաց (որոց առաջին կարգին մէջն է Անգլիա) վստահութիւնն գրաւէ, Անգլիա ալ իր կողմէն, պէտք է որ, հասկնայ թէ ո՞րքան մէկ առոյգ, բարեկարգ և ազատ ազգի, ինչպէս է Իտալիա, դաշնակցութիւնն նախապատիւ է բռնաւորական կառավարութեանց խախտու եւ այլասեռ զուգաւորութեանէն: Այսու ամենայնիւ չեմ յուսար, ցաւելով կըսեմ, որ Իտալիա իր ճակատագրին համար, առանց միւս անգամ պատերազմի ահաւոր փորձն փորձելու: Անգլիոյ ձայնն կըսեն և կյարգեն. Անգլիա Եւրոպայի ճակատագրի ծայրագոյն իրաւարարն է: Իտալիայ թող լաւ համոզուի, որ երբեք Իտալիոյ խնդիրն, որպէս և ոչ այլ ազգայնութեանց խնդիրն,

չպիտի կարենայ լուծել փոխարինութիւններով կամ տիրակցական հարցաւարտասխանեօք:»

«Ասիայն ազգաց հոմերաշխութեան մեծ սկզբ բունրին առջև, զոր տիեզերաց գիտակցութիւնն բարոյեց և արագորժեց, իմ բանս Իտալիոյ վերայ (միայն) չեմ կրնար ամիտիլել մանաւանդ, երբ ազգաց ճշմարտիւ սուրբ դաշնակցութեանց գուշակութիւնն և խոստումն անշրջելի կնքուեցաւ, երբ Եւրոպայի ամեն կողմի քարտեալ մարդոց ձեռքն սխմեցի:»

«Այս հիւրասէր ծովեզրս թողով չկարեմ այլ ևս սրտիս դադունիքն ծածկել: Ճնշեալ ժողովրդոց իրաւունքն կյանձնեմ ամենաառատախիտ և ամենաներամիտ ազգին: Որովհետեւ անոնց վտարանջութիւնն հաւաստի է և յաղթութիւնն՝ անտաւախութիւն, Անգլիա կրնայ իր անուան կարող վաճանին տակ անոնց հովանի ըլլալ և անոնց օգնել, եթէ պէտք է, իր զօրեղ աջովն: Գիտէ Անգլիա որ մինակ չմնար այս մեծ առաքելութեան մէջ: Ներուցէն անդին կայ մէկ այլ հսկայ ազգ, զոր բաղում անգամ բռնակալութեան ճարակութիւնն մղեթ խանդալոյ և թշնամի. ըլլալ այս երկրիս (Անգլիա). այլ որոյ ազատութիւնն կրնայ ընել բարեկամ եւ նախանձորդ խաղաղութեան արուեստին մէջ:»

«Ազատութիւն՝ ահա արեւն, որ կրնայ պտղաբեր ընել երկու քաղաքակիրթ ազգերու անկեղծ և և ահաւոր դաշնակցութիւնն: Ասով, առանց թուրն պատենէն հանելու, աշխարհի խաղաղութեան մեծ գործն կլինայ:»

Յ. Գարիբալդի

Պենըիտ-Պարկ (Կորնուալս) 26 Ապրիլ:

ՅԻՍՈՒՍԵԱՆՆԵՐ

Արշաղոյս Արարատեանի 724 թիւն կժանուցանէ թէ Յիսուսեան Ընկերութիւնն Կոստանտնուպօլիս հաստատուելու համար այլեւայլ գետիններ կգնէ, Միջագիւղի և Պերայի թաղերն, ուր վանք, դպրոց և եկեղեցի կանգնելու մտադրութիւն ունի: Յանկալի էր որ Հայ լրագրոց Նեստորն այս լուրս իր ընթերցողաց հաղորդելով՝ հաճէր նաև անոնց քանի մի նախազուշութեան խորհուրդներ տալ. իրողի Յիսուսեան միաբանութեան Կոստանտնուպօլիս հաստատուելու ձեռնարկութեան նպատակն այլ բան չէ, եթէ ոչ արեւելեան բրիտանիոյ, ըսել կուղեմ, մեր ազգի մէջ, կրօնափոխութեան եւ բարուց ազականութեան ժանտախտն ճարակել տալ:

Հաւանական է կարծել որ Յոյն, Բուլղար, Մոլդաւ, Վալաք, Սերբ և Սլաւաց այլեւայլ ցեղերն անոնցմէ զգուշանան, ինչպէս որ մինչև ցայսօր զգուշացեր են. հաւանական է նաև, ոչ միայն կարծել. այլ եւ, իբրեւ ճշգրիտ հաւատալ թէ արեւմտեան Յիսուսեանք եթէ վերստին Կոստանտնուպօլիս բնակութիւն հաստատուելու փորձ կընեն, վստայի արեւելեան Յիսուսեաններէն խրախոյս եւ հրաւիր ընդունենեն: Եթէ կան Մեծնուպի և Երևակի դրոշմ ունեցող թերթեր, որք, ուր ոսկի կայ, հոն կրօնք եւ մարդութիւն կան, ըսելով, պատրաստ են անոնց ուղղակի կամ անուղ-

չառնուի, որ ըստ իս, շատ կարելի է և ամենա-
զիւրկն, միայն թէ Սրբազումար Արծնական Ժո-
ղովն իր պաշտօնն անձամբ իր կատարէ :

Ամեն կողմէն կրուի թէ բողոքական կամ
հռոմէական եղող Հայերն Անդիկոյ կամ Ֆրան-
սայի պաշտպանութիւնն կրկնէն : Այս ըստ
բողոքական անհիմն է, անվաւեր և միանգամայն
զրպարտութիւն Օսմանեան բաղադրականութեանն :
Ով որ 1856 թուին Փարիս դուռն դաշինքն կար-
գացերէ, գիտնալուէ հարկաւ, որ քրիստոնեայ
տէրութեանց մասնաւոր պաշտպանութիւնն վերջ-
ուած է, և բրիտանեայ տէրութիւններն հաւաքա-
բար միայն և անկտիր ամեն քրիստոնեայ Ժողո-
վրոց պաշտպանութիւն ընելու կորուց են : Գի-
տնմբ նաեւ որ Օսմանեան Պետութիւնն Հայու եւ
Հուսի, Հռոմէականի եւ Բողոքականի մէջ ամե-
նէին խորութիւն եւ անխառնութիւն չընէր : Բայ
յայտմանէ, այժմ ի՞նչ ընելութիւն, ի՞նչ հարատա-
հարութիւն, ի՞նչ կեղեքանք կան Թիւրքիայի մէջ :
Միթէ Թիւրքիայի բրիտանեայ արդի վիճակն
100 տարի առաջ եղածին հետ համեմատելով,
հարկաւորապէս լուսաւոր չէ : Միթէ ամեն
քրիստոնեայք մի եւ նոյն մարմն, մի եւ նոյն զխա-
հարին, մի եւ նոյն բաժն կամ կրուն չեն վճարեր
Օսմանեան Տէրութեան : Մեր ազգն, որ այժմ
Մահմադրութիւն ունի, Արծնական եւ Քաղա-
բական Ժողովներ ունի, Օսմանեան Այսպետութեան
այլ և այլ գործ երու մէջ այնչափ նշանաւոր անդա-
նէր ունի, միթէ կարող չէ համոզել Նոյն Այս-
սերական Առաւելարութիւնն թէ Օսմանեան Պե-
տութեան խախտման շահն կարահանջէ, որ Հայն
միշտ Առաւելարական մնայ եւ ոչ թէ Բողոքական
կամ Հռոմէական ըլլայ : Վստի Հայն Հայկական
Եկեղեցիի մէջ մնալով, միշտ Օսմանեան Տէրու-
թիւնն իրեն իշխան կճանաչէ : Իսկ իր կրօնքն
փոխելով, իր բուն տիրոջ տեղ ուրիշ մէկ իշխան
կճանաչէ, որ Օսմանեան Առաւելարութեանն
շատ հաճոյական և օգտակար ըլլալու չէ : Դար-
ձեալ, միթէ Հայոց ազգն 4-500 տարիէ ի վեր
Օսմանեան հպատակ չէր : և միթէ անոր նախ-
նեայ կրած չարքն, արդի սերնդեան կրածին հետ
համեմատելով՝ հարկաւորապէս դժնդակ և ողբալի
չէին, սակայն անասն Հայն ոչ կրօնափոխութեան
գործելի ակտն ակտաւալ, ոչ ալ ան դիէն ան դիէն
երեւակոյական պաշտպանութիւն խնդրէ : Եւ
ո՞վ պիտի Բողոքական (մեթոդիստ կամ երկրա-
կան) Հայն պաշտպանէ : — Անդիկոն, — քաւ-
լիցի : — Անդիկոն անդիկոն կամ եպիսկոպոսա-
կան եկեղեցին միայն կընդունի և կըպաշտպանէ :
անկէ դուրս եղածներուն ոչ միայն օգնութիւն և
պաշտպանութիւն չընէր ամենեւին, այլ ամենն ալ
հերձաւորաբար բարոյեցնելով՝ անոնց վերայ նաեւ հար-
կեր գրեթէ իր եկեղեցին և եկեղեցականներն
ապրեցնելու համար : Իսկ Հռոմէական Հայերն ո՞վ
պիտի պաշտպանէ : — Ֆրանսա՞ն : — յաւիտեան :
Եթէ 1789 թուէն առաջ եղած Ֆրանսայի համար
այսպիսի կարծիք ըլլար, գուցէ ըստ մասին ըն-
դունելի էր : այլ արդի Ֆրանսայի վերայ այսպիսի
կարծիք ունեցողն կամ անբան ըլլալու է կամ
անամօթ խաբարայ : Մեր որ 10 տարի Ֆրանսա
անցուցեր ենք և ամենայն ջանք անոր օրէնքն և
բաղադրականութիւնն ընկերներ, կրնամք համար-
ձակ վերցնել թէ հոն կաթողիկէ եպիսկոպոսն, բո-
ղոքական հովիւն, երրայեցի խախտման և մահմե-
տական մողան, գէթ միայն չափ իրարմէ առա-
ւելութիւն կամ նուազութիւն չունին, թէ

Ֆրանսայի մէջ Ապօղիկի եկեղեցին, Հրէի սինա-
գոգն, Բողոքականի աղօթարանն և Մահմետա-
կանի մզկիթն, իրարմէ ոչ առաւելութիւն ունին, ոչ
նուազութիւն : Թէ Տէրութիւնն ամեն կրօնից պաշ-
տօնէից հաւասար թոշակ կտայ, ամեն կրօնից
ժամատեղիներն իր ծախքովն կըլինէ, կնորոգէ և
անոնց պիտոյքն կհոգայ : Թէ Ֆրանսայի մէջ Հռոմէ-
կանն այնչափ իրաւունք ունի Հրէին իր կրօնն
բարոյել, որչափ Մահմետականն իրաւունք
ունի Հռոմէականին իր դէնն սովորեցնել : Արդ
եթէ Ֆրանսա, իր երկրին մէջ այսչափ ներող
և ազատասէր է, ի՞նչպէս կրնայ ըլլալ որ անիկա
Թիւրքիայի մէջ այսչափ մոլեռանդն ըլլայ : Քաւ-
լիցի : ասիկա զրպարտութիւն է Ֆրանսայի դէմ
և խաբարայութիւն պարզամիտ Հայերն մողորցնելու
համար : Ֆրանսայի կառավարութիւնն մարդա-
սիրութեան սկզբանց վերայ հիմնեալ է : Եթէ մեր
եկեղեցւոյ հովիւներն ալ, մեր ժողովուրդն ալ
անոր դեպքանայ և հիւսկատոսայ ընտանեանն՝
մի եւ նոյն յարդն, և մարդասիրութիւնն գտնեն
պիտի, և թերեւս, աւելի քան թէ Հռոմէական
կարգաւորներն :

Աստի՛ն մեր ժողովրդեան կորստեան արտարին
ամեն պատճառարանութիւններն անաչառարար
ընելով և ամենն ալ անհիմն, անտեղի և խաբէա-
կան գտնելով, մեր, մեր խղճի վիպութեանն,
մեր ժողովրդեան կրօնափոխութեանն այլ զօրեղ
և անընդի պատճառ չեմք, գտնել քան թէ մեր
ազգի և եկեղեցիի մէջ բռնեալ Յիսուսեան
խմբակն, և մեր Արծնական և Քաղաքական Ժողո-
վոց և հովուայ գայթ ի գայթ և անապատակ
ընթացքն : Մեր կարգի, կանոնի և օրինաց ոչ
միայն ջատագով ենք, այլ և ամենայն օրինաւոր
իշխանութեանց ամենահզօւ հպատակ : Հետեւա-
բար կարեմք Մահմադրութիւնն, կողմեմք ամեն
ազգասէր ազգայնոց ճիւղն, որք կըմանն մեր
ժողովրդեան մէջ հաւասարութեան, իրաւանց և
բաղադրակրթութեան սկզբունք խօթել : այլ շատ
բարեկամ չեմք և ոչ իսկ կողմեմք այն ամեն ժո-
ղով, մասնաժողով, յանձնաժողով և այլ ման-
ուածոյ անիւներ և ճախարակներ, որք ազգի
գործերն ուղարկելէն զատ այլ արդիւնք չունին :
Յոյներն, երբ 1831ին տէրութիւն ստացան, ազգա-
կին դուռնութենէ դրդեալ, Եւրոպայի ամեն
արքունիքն փառահեղ դեսպաններ խաբեցին :
սակայն երբ տարուան վերջն անոնց ծախքի
տուրմարներն Հասարակայ Խորհրդարանի սեղանին
վերայ դրուեցան՝ ան տեսն Հեղիններն զգացին
թէ անախառնութիւնն սուղի նստեր է իրենց : և
սկսան մի մի զմանք ետ կանչել և մօլց և ծախուց
մէջ հաւասարակշիւութիւն մտցունել : Այսպէս ալ
ի՞նչ հարկաւոր են մեզ այսչափ ատենանք, ժողովր-
դ և յանձնաժողովք : Եթէ այսչափ ժողովոց և
հրահանգաց վախճանն է մեր ազգի բարոյական,
բաղադրական կամ մասնորոշական բորելուութիւնն,
կարծեմք թէ, երկու կամ երեք տարուան փորձն,
պէտք եղածին աւելի, կըլլայ թէ մեր հասարա-
կութիւնն առջինէն աւելի բարեբախտ չէ : և թէ
մինչդեռ մերկններն քուէարկութեանց եւ ատենա-
բանութեանց կողմին, մեր անքուն թշնամիներն
մեր ժողովուրդն սոս գիէն ան դիէն կ'ապիշտակեն :
Աւելի լաւ չէ՞ ուրեմն որ ազգային գործոց վարչու-
թիւնն, որչափ կարելի է, թեթեւեղեցնելու և
պարզելով՝ մեր կրօնական և քաղաքական երեւ-
ութեաններն աւելի մտադրութիւն ընծայեն մեր
հասարակութեան կարեւոր և ամենակարեւոր

պիտոյիցն, որպէսզի պատուական եւ անդին ժա-
մանակն յաւաքեալ չծախուի, ինչպէս որ Ֆրան-
սայի 1848 թուի Հասարակապետութեան երեսօն-
խաններն Շանգ Էլիզէ դեմոստրանտներու կամ
չցանկերու վերայ հակաճառութիւն ընելով գրեւորին
թմրեցուցին :

Տարակոյս չկայ որ ամեն վարչութիւն, պէտք է
որ, մէկ նպատակ ունենայ : տարակոյս չկայ որ
ամեն ազգ, ինչպէս և ամեն անհատ, կարեւոր և
անկարեւոր, մօտաւոր եւ հեռաւոր, սովորողա-
կան եւ անսովորողական պիտոյք ունենայ : Հա-
մոզեաւ եմք որ մեր կրօնական եւ բաղադրական
երեսօնխաններն իրենց պաշտաման վսեմութիւնն
ապէկ կզգան, եւ աւելի ևս կըմանն զայն վարել
հասարակայ օգտին համար, մեր ևս ծաղրելի
կըլլայինք եթէ մեր Ժողովներէն մի եւ նոյն փորձա-
ութիւնն պահանջէինք, ինչ որ օրէն է պահանջել
Անդիկոյ կամ Հեղեկոյ խորհրդարաններէն :
սակայն ո՞ր Հայն է, որ չզգար թէ մեր արդի կար-
եւորագոյն եւ սովորողական պէտքն է մեր ազգու-
թեան պահպանութիւնն հաւատրի միարանու-
թեան միջոցաւ, մեր ազգային գործոց արագ
անօրէնութիւնն, եւ թէ մեզ ամենապիտանի է
արժանաւոր հովուայ պատրաստութիւնն : Ահա-
ւատիկ երեք ծանրակշիւ կէտեր, և, եթէ կարե-
լի է այսպէս ըսել, մեր ազգի կենաց և մահու
կէտերն, որոց առջեւ աներեւոյթ ըլլալու են ամեն
մարդկային կիրք և դիտմունք, որ Հայութիւնն
միայն երեւալու է իր անցեալովն, ներկային և
ապագային, Հայկական եկեղեցին միայն, իրեւ
առաջին և գերագոյն նպատակ, առ որ զմեզ
առաջնորդելու համար երկինք արժանի բրերէ
արդի երեսօնխաններն այս սուրբ եւ նուիրական
պաշտօնիս մշակ ընտրելով :

Վերադառնալով կրկնեմք, մեր ազգի արդի քաղա-
քական գործոց վիճակն բաւականէն աւելի կրո-
ղորէ որ անոնք յամր, շատ յամր եւ վտտակար
կերպիւ կըքալեն : զորս հարկ է ծանրադատուի
խոջընդոտներէ ազատելով քաղցնել, որչափ
կարելի է, արագ, անարգել և ամենայն փու-
թոյ պնդութեամբ քաղցնել : Երկրորդ՝ մեր ազգի
կրօնական իրողութեանց մատակարարութիւնն
յաւազին կորուստներով կողորդէ որ մեր եկեղեցին
եթէ մէկ կողմէն, ընտանի թշնամիներով կ'ուղ-
ուի անդադար, միւս կողմէն, մեր հովիւներն ալ
իրենց նուիրական պաշտօնն կարեւոր արթնու-
թեամբ և սրտեւանդն հոգացողութեամբ չեն
վարեր եկեղեցւոյ աճման եւ շինութեան համար :
Ահաւատիկ երկու ամենակարեւոր կէտեր, որոց
վերայ կ'ընտրեմք Ազգային Քաղաքական եւ
Արծնական Ժողովներու ըլլամիտ ուղարկութիւնն :
և կ'աւելուեմք թէ : ամեն մարդ գիտէ որ մարմնոց
ամեն անդամներն թէ և իրենց պիտանաւորութիւնն
ունին : բայց անոնց մէկուն անդժշկելի հիւանդու-
թեամբ անտանալուն պէս, փորձառու եւ մարդա-
սէր բժիշկներն կարելի կ'ապտուիրեն որպէսզի ան-
տանալ անդամն առողջ անդամներն ալ չվա-
րակէ և և չմեղցնէ : Արդ՝ մեր հիւանդութիւնն
մահաբեր ըլլալով, դարմանն ալ, հարկ է, որ
առաջին և կսկեցուցիչ ըլլայ :

Գիտեմք որ բարեգովեալ Պօղոս Պատրիարքն
յետոյ (1821) Պօղոս Բարեպետ վերայ աւելի արժա-
նաւորագոյնապատրիարք չէր բաղկեր, մինչեւ այժմ,
ինչպէս է արդի Ամենապատու, կենդանողէս,
ազգասէր եւ լուսաւորեալ Տէր Պօղոս Բարեպ-
Սրբազան Արքիմ : Գիտէ ամենայն մարդ նոյնպէս

Այս շաբաթու լիվրպոլ բամբակի ծախքն անցեալ շաբաթուան կէսէն նուազ էր. բայց վոլիթմէթայի (Հոգեպալտեան) ընդհանուր գուման պարագի լուր և Ամերիկայէն Գրանտի շաբաթ ման լուրին ալա. սեւ լուր, այսպիսի առևտուրն ալ աւելի վատնէ թեանն չան է քան թէ տկարութեան: Բոլոր ծախքն է 47,110 ք. ուրուն 6,920ն առու. ծախքի. 16,270ն դուրս երթալու և մնացեալն ներքին ապահանջ է համար էին: Այս շաբաթու լիվրպոլ մոսած բամբակի գումարն է 72,450 ք. և համբարն կայ 351,500 ք.: Գիներու վերայ եղած տարբերութիւնն, անցեալ շաբաթուան գիներէն, չորսպէսին 3/4 փենի պակաս է:

Լիվրպոլ բամբակի շուկային վերայ ըրած դիտողութիւնիս Մանչեստրի վաճառանոցին աւելի կվերաբերին որովհետև այս շաբաթու Հոլլանդացիներ հետ թաղարիս ձիարաւի պարեգարան ըլլալով, երեքշաբթի օրուան բուրսն, որչափ որ քիչ բազմութիւն կտեսնուէր ալ նէ, այսօրուան բուրսն մէկ քանի անձէ բազմացեալ էր, և եղած առևտուրն ալ նշանակութեան անարժան է: Չինաս. տանն եկած վերջին լուրերն քաջալերական են. բայց Հոլլան. տանն չրթինի և մանածի վերայ հետապրական լուրերն ընդարձակ առևտուրի մէջ մտնելու բաղձանք չեն տար: Միացեալ Նահանգաց ներս մտնելու ապրանքի մարսն հարկւրին 50 բարձրցնելն ալ, ըստ մասին, առևտուրի նպակելուն պատճառ եղաւ, թէպէտև այն երկրին Մանչեստրի հետ ունեցած առևտուրն առջինի հետ բաղդա. տեղով նոյն կարևորութիւնն չունի այժմ:

Գիներուն վերայ նշանակելու արժանի տարբերութիւն չկայ, ուստի անցեալ շաբաթու գիներն չենք փոխեր. միայն կվերջացնենք աւելցնելով թէ անցեալ շաբաթ ծախողի կողմն զօրաւոր էր, այս շաբաթ գնողի կողմն զօրաւոր է:

Բամբակի գիներու տարբերութիւնն

գին 1864 ամի. գին 1863 ամի

Մայիսի 20 Նոյն տանն

փենի.	փենի.
Ամերիկայի Սեյւլանդ	45/40 43/52
Եգիպտոսի	28 1/2/29 1/2 22/24
Հոլլանդացի	23/23 1/2 18 1/2/19 1/2
Սուրաթի	21 1/2/23 0/0
Մադրասի	21/22 0/17 1/2
Բանկալայի	16 1/2/17 13 1/2/14 1/2
Չինաց	19/20 15 1/2/16 1/2

ԿՏԱԻԵՂԷՆ ԶԵՌԱԳՈՐԾ ԿԱՄ ՄԱՆԻՖԱՏՈՒՐԱ ՄԱՆԶԵՍՏԵՐ

T ՄԱՐԲԱ

		Լարիք	Լիւր	Չիւ. փենի.	Չիւ. փենի.	Եարդ.
”	-	20 կամ	21	3	2/3½	2/6½ 24
”	-	21	” 22	4	2/3	2/5 ”
”	-	22	”	5	2/2	2/5 ”
”	-	31	” 32	7	2/2	2/4 ”
Մաշուտի	-	26	” 27	5	2/5	2/8 ”
”	-	28	” 29	6	2/4	2/7 ”
”	-	31	” 32	7	2/6	2/7 ”
ԱՄԵՐԻԿԱՆ	-	26	” 27	2½-3	2/7	2/9 36
”	-	28	” 27	4	2/6	2/8 ”
”	-	36	4 5	2/6	2/8	”
”	-	36	6	2/2	2/6	”
”	-	38	7	” ”	” ”	”
”	-	39	8	2/3	2/6	”
”	-	40	9	” ”	” ”	”
”	-	42	10	2 3	2/5	”

ԲԱՍՄԱՅԻ ԿՏԱԻ

Մատապոլամ	31	32	5½	14/9	15/3	46
"	31	32	6	16/0	16/3	"
"	32		6½	17/8	17/9½	"
Փրիստեր	34	16×16	8½	22/9	23/3	50
"	"	"	9	23/6	24/0	"
"	36	17×17	9½	27/0	27/6	"
"	36	18×18	10	28/0	29/0	"
"	36	17×20	10¼	28/6	29/0	"

ՄԱՏԱՄՊՈՒ ԶԵՐԻՆԿ

Յիւլ ճերմակ	34	6	0/0	0/0	40
	36	7	0/0	0/0	
Նաշուր Խաւ	32	9 1/2	0/0	0/0	
		6	15/10 1/2	0/0	
		7	0/0	0/0	
		8 1/2	21/10 1/2	21/10 1/2	

ԱՄՎԱՇՊՈՒՐ ճերմակ

	6/4	3	8/0	8/1	20
	9/8	2 1/2	6/11	7/0	
	4/4	1 1/2	4/7 1/2	5/0	

ՄԱՆԱԾ

Ա. տեսակ	Թիւ	Սրա	2/3	Չիւ. փենի.	Չիւ. փենի.
"	20	"	2/1	"	2/3
Բ.	12	"	2/3	"	2/4 1/2
"	20	"	2/5	"	2/6 1/2
Ա.	40	"	2/6 1/2	"	2/8

ԲՈՒՐԴ. Լիվրպոլ և Լոնդոն: Մայիսի 20:

Ամսոյ 5-7 ին ծախուած բուրդի գիներն բարձրցան, հասարակ տեսակին՝ 1-1 1/2 փ. լաւ տեսակին՝ 3-4 փ. զնոյ աւելի կար բան թէ ծախող, և գիներն Փետրվարի գիներէն, հարկւրին 10, բարձր էին: Արեւելեան Հոլլանդացի բուրդ ծախուեցաւ 10,218 քաւ. Սպանիոյ՝ 176 ք. Ռիպեր-Պլատի՝ 566 ք. Լիմսի՝ 392 ք. Արքիպի՝ 2,541 ք. Եգիպտոսի՝ 200 ք. Թուրքաց՝ 383 ք. Դոնակի՝ 1,119 ք. Արքիպի՝ 130 և Արքիպի՝ 822 ք.:

	գին	լիւրքէն
	շիւ. փեն.՝	շիւ. փեն.
Եգիպտոսի ճերմակ լաւն	1/ 8	2/0
Ալբանիայի, Վալոնիէի և Սկոթիայի լաւն	1/ 3	1/6
Ինքիւրի ճերմակ Ֆիլիպի	2/ 9	2/10
Ինքիւրի լուացուած Ա. տեսակն	1/ 1	1/3
Սիւրիոյ ճերմակ լուացուածն	1/ 0	1/5
Պարսից ճերմակ Ա.	1/ 6	1/7½
Ռուսիոյ լաւ մերկոս	2/ 0	2/6
= Խաւն (մետիս)	1/ 8	2/0
Բրուիլի լուացուածն	0/10	1/0
Դոնի գալթն (Թիֆլիս)	1/ 8	1/9
Մերսիկայի	1/ 2	1/4

ՄԵՏԱՔԱՍ Լոնդոն: Մայիսի 20:

Մետաքսի առուծախի համար յատուկ շրջաբերական չա. ովք և ոչ եկած կամ ծախուած մետաքսի քանակութիւնն ճշդիւ գիտեմք: Մանաւոր ցուցակներէ գիտեմք միայն որ գիներն հաս. տատ են և ծախուած քանակութիւնն բաւական զօրաւոր. շաբաթու գիներն ալ ստորեւ նշանակուած են:

Բանկալայի Ա. տեսակն	գին	լիւր
= միջակն	0/0	0/0
Չինաստանի Թիւ 1 և 2	18/6	23/6
= 3 և 4	0/0	0/0
Յափոնի Ա. տեսակն	13/0	25/6
= միջակ և ստորին	0/0	0/0
Պարսկաստանի Ա. տեսակն	13/0	17/0
= միջակ	0/0	0/0
Թուրքաստանի. Բուրսայի ֆարքիլա	27/0	31/0
Իտալիոյ Միլանի	22/0	25/0

ԿԵՆԵՐԻ ԱՊՐԱՆԵՐ:

Սուրճի հատուկ և Լիւպէի 3 փենի. Յիւլի Գորտի 1 1/2 փենի. Թիւ 1 և 2 փենի. Լաւի Լաւի Լաւի 7 1/2 փենի. Ռուի Լաւի 10 1/2 փենի. Թիւ 1 և 2 փենի. Լաւի Լաւի 12 1/2 փենի. 8 փենի. Լաւի 13 1/2 փենի. Լաւի 16 1/2 փենի. 18 1/2 փենի. 4 փենի. Լաւի 1 1/2 փենի:

ՇԱՔԱՐ. Բանկալայի կոսիփոր	գին	լիւր
= Բենարէսի ճերմակն	43/6	48/0
= Դաւի	44/0	46/0
= Մադրասի ճերմակն	38/0	43/6
= Չինի և Սիւմի ճերմակ և դեղին	35/0	36/0
= Թուրք տեսակն	43/0	48/0
= Անգլիոյ կոսիփոր	33/0	40/0
= 10 լիւրանոց գլուխ	0/0	0/0
= Հալանայի ճերմակն	0/0	0/0
= Հոլանդացի 10—6 լիւր. գլուխ	38 1/2/0	39/0
= Լիւրանոց կաւոր	34/0	36/0
= Մանիլայի	0/0	0/0
= Յալայի	37/0	38/0
ՍՈՒՐՃ (քաւիկ) Միլանի և Լիւպէի	43/0	48/0
= Յալայի և Բաւարիայի	94/0	102/0
= Պորտո Ռիլի	76/0	86/0
= Այն Դոմիլի	76/0	84/0
= Սիւր Դոմիլի	62/0	72/0

ԲՐԻՆԶ Բանկալայի	գին	լիւր
= Մադրասի	9/3	14/0
= Փատնայի	8/0	10/3
= Առաւելանի	12/6	21/0
= 7/9	10/6	
ՅՈՐԵՆ Օղեսայի	40/0	43/0
= Թիւրքացի	0/0	0/0
ԳՍՐԻ	30/0	35/0
ՄՍՐԱՅՈՐԵՆ	29/0	30/0
ԿՏԱՎԱՏ Եգիպտոսի	58/0	64/0
= Ռիպեր Կ.	51/0	52/0
ԿՈՃ (գինի ֆիւլ) Յամպիլի. Լաւի Լաւի	120/0	100/0
= Արքիպի	50/0	0/0
ՌՕՄ Յամպիլի	2/6	3/0
= Նոլեաց և Հոլլանդացի	0/0	0/0
ՊՂՊԵՂ (Բիւլ) Մալալի. Լաւի Լաւի	44 1/2	4 1/2
= Սիւրաթի սեն	7/4	7/0
= ճերմակ տեսակն	7/6	1/1
ԹԵՅ Կոնդու	7/7	2/3
= Սուլոն	1/1	2/8
ՏԱՔԻԵՂ (քաւիկ)	2/0 1/2	2/3
ԱՅԻՕՆ Թուրքաստանի	19/6	0/0
ԽԵԺ (գաւթ) Սուրաթի Լաւի	3 5/0	3 15/0
= Արքիպի	58/0	64/0
ԳԻՏՈՐ (մաղը) Կապուտ	190/0	200/0
= ճերմակ և ալ տեսակ	160/0	170/0
ՃԵՀԻ Պարսկաստանի	75/0	85/0
= Ինքիւրի	39/0	42/0
ԿԱՂԻՆ ՎԱՅՐԻ (փալամուտ) Թոն	14/0	17/0
ՏՈՐՈՆ (քաւիկ ֆիւլ) Ինքիւրի. Լաւի	48/0	52/0
= Արքիպի, Արքիպի և Կապուտ	31/0	33/0
= Բուրսայի	25/0	26/0
ԿԱՆԵՓ Ռիպեր	34 0/0	35 10/0
= Մանիլայի	33 0/0	35 0/0
= Բուրսայի	21 0/0	31 0/0
ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ (քաւիկ) ճերմակ. Լաւի	3/3	3/7
= Խաւն	3/3	4/4
ԼԵՂԱԿ (չիլի) Բանկալայի Լաւի	7/6	7/10
= միջակ և ստորին	6/0	7/3
= Ուլի	2/0	6/6
= Մադրասի ամեն տեսակն	1/0	5/9
= Բիւրսայի	1/9	6/6
ՇԻԲ Գլուխ Լաւի Լաւի	6/0	6/2 1/2
ՆՇԱԻՐ Լաւի	6 0/0	6 2/2 1/2
ԳՐԸՐ ԹԱՐԹԱՐ Յիւլի	117/6	120/0
= Գլուխ	95/0	105/0
= Թուրք	85/0	92/6
ՄԱԳՆԵՅԻԱ	42/6	45/0
ՎԱՐԴԻԻԴ (գլուխ Լաւի) Եղան	1 6/0	24/0
ՄԵՂԱՍՈՒ Հոլլանդացի. Լաւի. Լաւի	8 10/0	8 15/0
= Արքիպի	8 15/0	9 0/0
ՃԱՐՊ Պետերսբուրգի Ս. Ե Լաւի	43/0	00 0/0
= Սեւ ծովի եկած	40/3	0/0 0/0
= Հարաւայի Արքիպի	00 41/6	00 42/0
ԹՈՒԶ (նճիւր) Լաւի	35/0	00 55/0
ԶԱՄԻԶ Վալանի	00 26/0	00 28/0
= Ինքիւրի Լաւի	00 25/0	00 30/0
= Սուրաթի Ա.	00 38/0	00 44/0
ԶԵԺ Կիլիկիոյ 252 Գլուխ (Թոն). Լաւի	61 0/0	62 10/0
= Արքիպի և Մալալի	56 0/0	0/0 10/0
Թիւրք	58 0/0	0/0 0/0
ՄԵՏԱՂ. Գ. Գլուխ. Լաւի տակ	110 0/0	0/0 0/0
= Թեթի (չիլի)	103 0/0	105 0/0
ԶԻՆԳ	29 0/0	0/0 0/0
ԵՐԿԱԹ ճող	8 15/0	9 0/0
= Գաւթու	10 0/0	10 10/0
= Թեթի	11 5/0	12 5/0
ԿԱՊԱՐ (քուրչուն) Թեթի	21 17 1/2/0	22/0 0/0
ԱՆԱԳ (քաւիկ)	112/0	114/0
ԹԵՆԵՔԵ i.c.	24 0/0	26/0

ՏԵՐԵԻ ՄԵՐԱԳԻՐ Կ. Վ. ՇԱՀՆԱՅԱՐԱՆՅՑ ՄԱՆԶԵՍՏԵՐ. Ի ՏՊԱՐԱՆԻ ԻՐՈՒՄ

Printed and published by K. Vardapete Shahnazarian, 151, Rumford-street, Chorlton-on-Med-look, Manchester. Monday, May 23, 1864.